ՏԵՂԵԿԱՆՔ
ԿՐԹՈՒԹՅԱՆ ԵՎ ԳԻՏՈՒԹՅԱՆ ՀԱՄԱԿԱՐԳՈՒՄ ԿՈՌՈՒՊՑԻՈՆ ԵՐԵՎՈՒՅԹՆԵՐԻ ԴԵՄ ՊԱՅՔԱՐԻ 2013-2014 ԹՎԱԿԱՆՆԵՐԻ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԻ ՀԱՄԱԼԻՐ ԾՐԱԳՐՈՎ 2014 ԹՎԱԿԱՆԻՆ ՆԱԽԱՏԵՍՎԱԾ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԻ ԿԱՏԱՐՄԱՆ ԸՆԹԱՑՔԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ
(տարեկան)

Միջոցառման անվանումը	Ակնկալվող արդյունքը 2014թ	Միջոցառումների կատարման արդյունքները	Պատասխանատու
1. Կրթության ոլորտի իրավական ակտերի վերանայում, կոռուպցիայի ռիսկերի գնահատում	- քաղաքացիական հասարակության և շահառուների առաջարկությունների հիման վրա որոշված է առաջնահերթ վերանայման ենթակա իրավական ակտերի ցանկը	Հաստատվել են՝ <<ՀՀ դպրոցականների առարկայական օլիմպիադայի կազմակերպման և անցկացման>>, <<ՀՀ հանրակրթական ուսումնական հաստատության սովորողի ընդունելության, տեղափոխման և ազատման>>, <<Հանրակրթության ոլորտում իրականացվող կրթական բնույթի առարկայական մրցույթների, մրցաշարերի, օլիմպիադաների չափորոշիչները սահմանելու մասին>> և <<Հանրակրթական ուսումնական հաստատության սովորողի ուսումնական առաջադիմության գնահատման երաշխավորությունների>> կարգերը: Լրամշակվել են՝ <<Հանրակրթական ուսումնական հաստատության ուսուցչի թափուր տեղի համար մրցույթի օրինակելի կարգը>>, <<Տարվա լավագույն ուսուցիչ>>, <<Տարվա լավագույն տնօրեն>>, <<Տարվա լավագույն դաստիարակ>> մրցույթների կարգերը: ՀՀ Նախագահի կողմից ս/թ հունիսի 5-ին վավերացվել են Ազգային ժողովի ընդունված՝ <<Կրթության մասին>> ՀՀ օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին>>, <<Նախնական մասնագիտական (արհեստագործական) և միջին մասնագիտական կրթության մասին>> ՀՀ օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին>> և <<Բարձրագույն և հետբուհական մասնագիտական կրթության մասին>> ՀՀ օրենքում լրացում և փոփոխություններ կատարելու մասին>> ՀՀ օրենքները (համապատասխանաբար թիվ	Իրավաբանական վարչություն (համակարգող), այլ ստորաբաժանումներ՝ ըստ իրավական ակտի էության

		ՀՕ-17-Ն, թիվ ՀՕ-18-Ն, թիվ ՀՕ-19-Ն ՀՀ օրենքներ): ՀՀ Նախագահի կողմից ս/թ հունիսի 9-ին ստորագրվել է <<Բարձրագույն և հետբուհական մասնագիտական կրթության մասին>> ՀՀ օրենքում փոփոխություն և լրացումներ կատարելու մասին>> ՀՀ օրենքը (ՀՕ-23-Ն): Օրենքը կապահովի բարձրագույն կրթության աջակցության հստակ մեխանիզմ՝ սոցիալական տարբեր խմբերի ուսանողների համար՝ հիմք ընդունելով բարձր առաջադիմությունը, ինչպես նաև կկարգավորի տարբեր բուհերի կողմից ձևավորվող ուսման վարձերի առավելագույն շեմերը:Կախված ուսանողի սոցիալական վիճակից Օրենքում հստակեցված է ուսման վարձավճարի զեղչման չափը: Մշակման փուլում է <<Սովորողի անհատական ուսուցման կարգի>> նախագիծը: Փոփոխություններ են կատարվել ՀՀ կառավարության 2002 թվականի մայիսի 20-ի թիվ 589 որոշմամբ հաստատված՝ <<Միջին մասնագիտական ուսումնական հաստատությունների բարձր առաջադիմություն ցուցաբերած շրջանավարտների՝ համապատասխան բարձրագույն ուսումնական հաստատություններում ուսուցումը շարունակելու կարգի>> մեջ:	
2. Սովորողների ընթացիկ գնահատման, դպրոցի ավարտական և բուհական ընդունելության միասնական քննությունների համակարգի կատարելագործում	- մշակված է փորձնական ծրագիր՝ համակարգչային ադապտիվ թեստավորման համակարգի ներդրման նպատակով	Վերանայվել է ընդունելության քննությունների համակարգը՝ իրականացվել են միասնական քննությունների համակարգչային ադապտիվ թեստավորման միջոցով կազմակերպման հնարավորության վերլուծական հետազոտումներ և տրվել է ներդրման ծախսերի ֆինանսական գնահատականը: Հրատարակվել են հետևյալ առարկաների 14 անուն շտեմարաններ՝ <<Հայոց լեզու և գրականություն>> (մաս 1, 2, 3), <<Մաթեմատիկա>> (մաս 1, 2, 3), <<Անգլերեն>> (մաս 1,2, 3), <<Հայոց պատմություն>>, <<Աշխարհագրություն>, <<Քիմիա>>, <<Ֆիզիկա>>, <<Կենսաբանություն>>, <<Ռուսաց լեզու>>, <<Գերմաներեն>>, <<Ֆրանսերեն>>: Հրատարակված	Հանրակրթության վարչություն, Բարձրագույն և հետբուհական մասնագիտական կրթության վարչություն, ԳԹԿ (համաձայնությամբ)

	- ներդրված է <<Հանրակրթական ուսումնական հաստատության սովորողի ուսումնական առաջադիմության գնահատման երաշխավորությունների կարգը>> - ավագ դպրոցներում փորձնական ներդրված է կրեդիտային համակարգ	շտեմարաններից 3-4-ական օրինակ ՀՀ պետական բյուջեի միջոցների հաշվին տրամադրվել է ՀՀ միջնակարգ և ավագ դպրոցներին: Ներդրված է .<<Հանրակրթական ուսումնական հաստատության սովորողի ուսումնական առաջադիմության գնահատման երաշխավորությունների կարգը>>: Անցկացվել են քննարկումներ ավագ դպրոցներում կրեդիտային համակարգի միջոցով ուսումնական գործընթացի կազմակերպման վերաբերյալ: Մշակվել և ՀՀ կառավարություն է ներկայացվել համապատասխան իրավական ակտի նախագիծ:	
3. Երաշխավորված անվճար տասներկուամյա (ներառյալ մասնագիտական) կրթությանն անցման համար օրենսդրական հիմքի ստեղծում	- երաշխավորված է անվճար 12-ամյա (ներառյալ մասնագիտական) կրթության կազմակերպումը	Փոփոխություններ և լրացումներ են կատարվել <<Կրթության մասին>> և <<Նախնական և միջին մասնագիտական կրթության մասին>> ՀՀ օրենքներում: Օրենսդրական նախաձեռնության համաձայն՝ եթե արհեստագործական և միջին մասնագիտական պետական ուսումնական հաստատությունում իրականացվում է հիմնական ընդհանուր կրթության հիմքով մասնագիտական կրթական ծրագիր, ապա դրանում ընդգրկված ուսանողի պարտադիր միջնակարգ կրթության երրորդ աստիճանի կրթական ծրագիրը ֆինանսավորվում է պետական բյուջեի միջոցներից՝ պետական հանրակրթական ուսումնական հաստատության համանման ծրագրին համապատասխան ֆինանսավորմամբ>: Միաժամանակ օրենսդրական նախաձեռնությամբ նախատեսվում է երաշխավորված նվազագույն իննամյա կրթությունից անցում կատարել երաշխավորված անվճար տասներկուամյա կրթության	Իրավաբանական վարչություն, Հանրակրթության վարչություն, Բարձրագույն և հետբուհական մասնագիտական կրթության վարչություն, Նախնական և միջին մասնագիտական կրթության վարչություն

	- ներդրված են հանրակրթությունից դուրս մնացող երեխաների կրթության մեջ ներգրավման նոր մեխանիզմներ	համակարգի (ներառյալ մասնագիտական կրթությունը): Այս նախաձեռնությամբ Հայաստանում պարտադիր կդառնա անվճար միջնակարգ ընդհանուր կամ նախնական (արհեստագործական) կամ միջին մասնագիտական կրթությունը՝ հնարավորություն ընձեռելով դպրոցահասակ երեխաներին մինչև 18 տարին լրանալը, իրացնելու ՀՀ Սահմանադրությամբ ամրագրված անվճար կրթություն (ներառյալ միջին մասնագիտական կրթությունը) ստանալու իրավունքը: Համապատասխան ՀՀ օրենքների նախագծերը գտնվում են ՀՀ Ազգային ժողովում: Մշակման փուլում է <<Սովորողի անհատական ուսուցման կարգի>> նախագիծը, որով կանոնակարգվելու է կրթության գործընթացից դուրս մնացող երեխաների հանրակրթության կազմակերպումը:	
4. Բարձրագույն կրթության ֆինանսավորման արդյունավետ համակարգի ներդրում՝ ԲԿ որակի և համապատասխանության բարձրացման, արդյունավետության բարելավման և հասարակության տարբեր սոցիալական խմբերի համար հավասար մատչելիության	- ներդրված են կրթաթոշակներ, նպաստներ՝ ուսանողի առաջադիմության, կարիքավորության և առաջնային նշանակություն ունեցող մասնագիտությունների պահանջարկի և այլ գործոնների հաշվառմամբ	Բարձրագույն ուսումնական հաստատություններում գործում է ուսման վարձի լրիվ կամ մասնակի զեղչի փոխհատուցման ճկուն համակարգ: <<Կրթության մասին>> և <<Բարձրագույն և հետբուհական կրթության մասին>> ՀՀ օրենքներում կատարվել են փոփոխություններ և լրացումներ, համաձայն որի՝ հնարավորություն է ընձեռվում բուհերի միջոցների հաշվին ուսման վարձի փոխհատուցում իրականացնել և ընդլայնել սոցիալապես խոցելի խմբերի ուսանողներին և ստեղծել հավասար ֆինանսական աջակցության պայմաններ՝ միևնույն կարգավիճակ ունեցող ուսանողների համար: Համաձայն «Կրթության մասին» ՀՀ օրենքի՝ բարձրագույն ուսումնական հաստատությունները տվյալ ուսումնական տարում անվճար ուսուցման համակարգ ընդունված ուսանողների թվի տասը տոկոսի չափով, իրենց միջոցների հաշվին, ըստ առաջադիմության փոխհատուցում են վճարովի ուսուցման համակարգի	Բարձրագույն և հետբուհական մասնագիտական կրթության վարչություն, Ֆինանսատնտեսագի-տական և հաշվապահական հաշվառման վարչություն

ապահովման նպատակով		ուսանողների ուսման վարձը՝ ըստ ՀՀ կրթության պետական կառավարման լիազոր մարմնի հաստատած՝ մասնագիտություններին հատկացված տեղերի քանակի: ՀՀ կառավարության 2012 թվականի հոկտեմբերի 10-ի N1323-Ն որոշմամբ փոփոխություն է կատարվել ՀՀ կառավարության 2006 թվականի հուլիսի 27-ի N 1183-ն որոշման մեջ, որով հստակեցվել է ուսման վճարի մասնակի փոխհատուցում ստացողների խմբերը: Այս իրավական ակտի համաձայն, 2013 թվականի սեպտեմբերից մեկնարկել է ՀՀ կառավարության 2006 թվականի հուլիսի 27-ի N 1183-Ն որոշմամբ հաստատված՝ ՀՀ ԿԳ նախարարության կողմից սահմանված ուսանողի միջին որակական գնահատականի նվազագույն շեմը հաղթահարած և ընտանիքների անապահովության գնահատման համակարգում հաշվառված անապահովության սահմանային միավորից բարձր միավորներ ունեցող ընտանիքների ուսանողներին, յուրաքանչյուր տարի՝ պետության կողմից ուսանողական նպաստի ձևով ուսման վճարի մասնակի փոխհատուցում տրամադրելու գործընթացը, որը կրում է շարունակական բնույթ: 2014 թվականին, շուրջ 1070 ուսանողի տրամադրվել է 50-100%-ի չափով պետության կողմից ուսման վարձի փոխհատուցում, որը կազմել է շուրջ 224 մլն. դրամ /2013 թվականին սույն ծրագրով փոխհատուցվող ուսանողների թիվը կազմել է 850, իսկ վերջիններիս համար սահմանված ուսման վարձի փոխհատուցման գումարը կազմել է 168 մլն. դրամ/:	
	- սահմանված է ուսման վարձի վերին շեմն ըստ մասնագիտությունների	Սահմանվել է ուսման վարձի առավելագույն շեմ՝ ըստ կրթական աստիճանների, մասնագիտությունների և հավատարմագրման արդյունքների, ինչպես նաև կառավարության լիազոր մարմնի կողմից հաստատված հատուկ սոցիալական ծրագրերի:	
	- ներդրված է լավագույն	Ներդրված է ՀՀ կառավարության 2013 թվականի	

	ուսանողի անվանական կրթաթոշակների տրամադրման կարգը, ընտրված լավագույն ուսանողներին տրամադրվել են անվանական կրթաթոշակներ	օգոստոսի 29-ի N1005-Ն որոշմամբ հաստատված՝ <<Հայաստանի Հանրապետության բարձրագույն կրթական ծրագրեր իրականացնող ուսումնական հաստատությունների լավագույն առաջադիմությամբ ուսանողների անվանական կրթաթոշակների տրամադրման կարգը, մրցույթի չափանիշները և մրցույթի մասնակցության հայտի ձևը>>: Անվանական կրթաթոշակները տրամադրվել են ըստ յոթ ոլորտների /բնագիտական (այդ թվում՝ մաթեմատիկական-տեղեկատվական և հաղորդակցման տեխնոլոգիաներ (ՏՀՏ), բժշկություն, հումանիտար գիտություններ, հասարակագիտություն, ճարտարա գիտություն (այդ թվում՝ ճարտարա պետական/գյուղատնտեսական), մշակույթ-սպորտ, հայագիտություն/: 2014 թվականին 7 ոլորտներով՝ ըստ կրթական ծրագրերի /բակալավր, մագիստրոս/, նախատեսվել է 42 մրցանակային տեղ (շուրջ 12 մլն դրամ խրախուսական գումար):	
	- ֆինանսավորման նոր մեխանիզմների ներդրման շրջանակներում ևս 3 պետական բուհերում իրականացված են նորարարական ծրագրեր	Ընթացքի մեջ են 2013 թվականի սեպտեմբերի 5-ին 10 բուհերի հետ կնքված դրամաշնորհային պայմանագրերի շրջանակներում նորարարական ծրագրերի իրականացման աշխատանքները: Հաշվետու ժամանակաշրջանում հերթական փուլի աշխատանքներն ավարտած բուհերը ներկայացրել են համապատասխան ծրագրային և ֆինանսական հաշվետվությունները: Իրականացվել է ներկայացված հաշվետվությունների դիտարկում, բուհերի հետ ըստ անհրաժեշտության կազմակերպվել են հանդիպումներ, պարզաբանվել են ներկայացված հաշվետվություններում առկա հարցերը: Քննարկվել և անհրաժեշտ վերանայումից հետո հաստատվել են ներկայացված գնումների փաթեթները: Կազմվել և ՆՄՀ համակարգող խորհրդին է ներկայացվել ՆՄՀ դրամաշնորհային ծրագրերի իրականացման տարեկան հաշվետվությունը, որն ընդունվել է խորհրդի կողմից: 2014 թվականի սեպտեմբերին ՆՄՀ	

		Համակարգող խորհրդին է ներկայացվել ՆՄՀ գործունեության տարեկան հաշվետվությունը: Հոկտեմբեր ամսվա ընթացքում իրականացվել են այցեր բուհեր՝ ծրագրերի մոնիթորինգի նպատակով: Նախաձեռնվել է կնքված դրամաշնորհային ծրագրերի վերջնաժամկետի երկարացման գործընթացը՝ <<Կրթության որակ և համապատասխանություն>> վարկային երկրորդ ծրագրի վերջնաժամկետի երկարացման հանգամանքի հաշվի առնմամբ: Ըստ այդմ, բուհերին են ուղարկվել գրություններ՝ ծրագրերի իրականացման իրատեսական վերջնաժամկետներ ներկայացնելու պահանջով: Հաշվետու ժամանակաշրջանում բուհերը ներկայացրել են համապատասխան առաջարկները: Բուհերի հետ 2014 թվականի նոյեմբերի 21-ին կնքվել են լրացուցիչ համաձայնագրեր: 2014 թվականի դեկտեմբերին ՀՀ պետական կառավարման ակադեմիան ավարտել է ՆՄՀ դրամաշնորհային ծրագրի իրականացումը: Հաշվետու ժամանակաշրջանում իրականացվել է ՆՄՀ դրամաշնորհների աուդիտորական կազմակերպության ընտրության գործընթացը, որի արդյունքներով ընտրված կազմակերպության հետ ընթացել են բանակցություններ դրամաշնորհային ծրագրերի իրականացումն ավարտած բուհերում աուդիտ անցկացնելու նպատակով պայմանագիր կնքելու շուրջ: Բանակցված պայմանագիրն ուղարկվել է ՀԲ հաստատմանը:	
5. Բուհերում որակի ապահովման ներքին համակարգերի ներդրում	- 16 պետական և 3 ոչ պետական բարձրագույն ուսումնական հաստատություններում ստեղծված է որակի ապահովման կառուցվածքային միավոր և ներդրված են որակի ապահովման ներքին մեխանիզմները	Բուհերում ստեղծվել են որակի ապահովման կենտրոններ: Աշխատանքներ են տարվում ուսանողների գիտելիքների գնահատման և դասախոսների վերապատրաստման համակարգերի կատարելագործման ուղղությամբ: Ընդհանուր առմամբ որակի ապահովման ներբուհական համակարգի ներդրման նպատակով <<Կրթության որակ և համապատասխանություն>> վարկային երկրորդ ծրագրի շրջանակներում դրամաշնորհներ են ստացել 26 բուհեր, այդ թվում՝ 21 պետական և 5 ոչ պետական բուհեր: Դրամաշնորհները բուհերին տրվել են 3 փուլով:	Բարձրագույն և հետբուհական մասնագիտական կրթության վարչություն, Մասնագիտական կրթության որակի ապահովման ազգային կենտրոն հիմնադրամ

		Առաջին փուլում դրամաշնորհ են ստացել 10 պետական բուհեր, երկրորդ փուլում՝ 8 պետական և 3 ոչ պետական բուհեր, իսկ երրորդ փուլում՝ ևս 3 պետական և 2 ոչ պետական բուհեր: Հաշվետու ժամանակաշրջանում դրամաշնորհային ծրագրերի իրականացումն ամփոփել են 22 բուհեր, այդ թվում՝ առաջին և երկրորդ փուլերով դրամաշնորհ ստացած բոլոր բուհերը, ինչպես նաև երրորդ փուլով դրամաշնորհ ստացած բուհերից երկուսը: Երրորդ փուլով դրամաշնորհ ստացած բուհերից երեքը դրամաշնորհային ծրագրի իրականացումը ավարտել են 2014 թվականի դեկտեմբերի 25-ին: Դրամաշնորհային ծրագրերի իրականացումն ավարտած բուհերը ներկայացրել են ամփոփ հաշվետվություններ և ինքնավերլուծություններ: Ինքնավերլուծությունները տրվել են ՄԿՈԱՊԱԿ-ի փորձաքննությանը: Դրամաշնորհային ծրագրերի կառավարման խորհուրդը քննարկել է ներկայացված ամփոփ հաշվետվությունները և ինքնավերլուծությունների վերաբերյալ ՄԿՈԱՊԱԿ-ի կողմից տրված փորձաքննության արդյունքները: Քննարկման արդյունքներով, ըստ անհրաժեշտության, կառավարման խորհուրդը որոշում է կայացրել դիմել այն բուհերին, որոնց ինքնավերլուծություններում հայտնաբերվել են թերություններ՝ սահմանված ժամկետում այդ թերությունները վերացնելու և վերանայված տարբերակներ ներկայացնելու պահանջով: Այն բուհերը, որոնց ուղղվել են նման գրություններ, սահմանված ժամկետներում ապահովել են ինքնավերլուծության վերանայումը և ներկայացումը: Այնուհետև վերանայված ինքնավերլուծությունները տրվել են ՄԿՈԱՊԱԿ-ի կրկնակի փորձաքննությանը և ընդունվել՝ համապատասխան փորձաքննության դրական եզրակացության:	
6. Կոռուպցիոն ռիսկերի նվազեցում քոլեջից բուհ անցման	- սահմանված է հիմնական կրթության հիմքով նախնական և միջին մասնագիտական	ՀՀ Նախագահի կողմից ս/թ հունիսի 5-ին վավերացվել են Ազգային ժողովի ընդունված <<Կրթության մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին>>,	Նախնական և միջին մասնագիտական կրթության վարչություն

գործընթացում	ուսումնական հաստատություն ընդունված շրջանավարտի կրթության շարունակման նոր պայմաններ	<<Նախնական մասնագիտական (արհեստագործական) և միջին մասնագիտական կրթության մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին>> և <<Բարձրագույն և հետբուհական մասնագիտական կրթության մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքում լրացում և փոփոխություններ կատարելու մասին>> ՀՀ օրենքները (համապատասխանաբար թիվ ՀՕ-17-Ն, թիվ ՀՕ-18-Ն, թիվ ՀՕ-19-Ն ՀՀ օրենքներ): Համաձայն <<Կրթության մասին>> ՀՀ օրենքի 23-րդ հոդվածի 4-րդ մասի՝ <<Միջին մասնագիտական ուսումնական հաստատությունների բարձր առաջադիմություն ցուցաբերած շրջանավարտները կարող են կրթությունը շարունակել բարձրագույն ուսումնական հաստատություններում համապատասխան մասնագիտությամբ՝ երկրորդ կուրսում՝ հեռակա ուսուցմամբ>>: Օրենքների կիրարկումն ապահովելու նպատակով փոփոխություններ են կատարվել ՀՀ կառավարության 2002 թվականի մայիսի 20-ի թիվ 589 որոշմամբ հաստատված՝ <<Միջին մասնագիտական ուսումնական հաստատությունների բարձր առաջադիմություն ցուցաբերած շրջանավարտների՝ համապատասխան բարձրագույն ուսումնական հաստատություններում ուսուցումը շարունակելու կարգի>> մեջ:	
7. Արտադպրոցական և հանրակրթական ուսումնական հաստատությունների կողմից վճարովի հիմունքներով լրացուցիչ կրթական ծառայությունների իականացման	- փոփոխված է ՀՀ կառավարության 2002 թվականի դեկտեմբերի 13-ի N2145-Ն որոշմամբ հաստատված՝ <<ՀՀ պետական արտադպրոցական կրթադաստիարակչական ուսումնական հաստատություններ>> պետական ոչ	Տրամադրվել են խորհրդատվություններ արտադպրոցական կրթադաստիարակչական ուսումնա կան հաստատությունների տնօրեններին՝ <<ՀՀ պետական արտադպրոցական կրթադաստիարակչական ուսումնական հաստատություններ>> պետական ոչ առևտրային կազմակերպության օրինակելի կանոնադրությամբ սահմանված պայմանագրային հիմունքներով անվճար և վճարովի ծառայությունների գործընթացը կանոնակարգելու նպատակով:	Մարզառազմական և արտաուսումնական դաստիարակության վարչություն

գործընթացում կոռուպցիոն ռիսկերի նվազեցում	առևտրային կազմակերպության օրինակելի կանոնադրությունը,որը սահմանում է պայմանագրային հիմունքներով անվճար և վճարովի ծառայությունների իրականացման պահանջները - փոփոխված է ՀՀ կառավարության 2010 թվականի նոյեմբերի 4-ի N1496-Ն որոշմամբ հաստատված՝ <<Հայաստանի Հանրապետության պետական հանրակրթական ուսումնական հաստատություններում (այսուհետ՝ հաստատություն) վճարովի հիմունքներով հանրակրթական և (կամ) մասնագիտական լրացուցիչ կրթական ծրագրերի, ինչպես նաև այլ ծառայությունների իրականացման կարգը >>, խստացվել են լրացուցիչ կրթական ծրագրերի իրականացման համար	Հանրակրթական ուսումնական հաստատություններում վճարովի հիմունքներով լրացուցիչ կրթական ծրագրերի իրականացման պահանջները խստացնելու նպատակով փոփոխություններ ու լրացումներ են կատարվել ՀՀ կառավարության 2010 թվականի նոյեմբերի 4-ի N1496-Ն որոշմամբ հաստատված՝ <<Հայաստանի Հանրապետության պետական հանրակրթական ուսումնական հաստատություններում (այսուհետ՝ հաստատություն) վճարովի հիմունքներով հանրակրթական և (կամ) մասնագիտական լրացուցիչ կրթական ծրագրերի, ինչպես նաև այլ ծառայությունների իրականացման կարգի>> մեջ: Նշված իրավական ակտի նախագծի վերաբերյալ առաջարկություններ ստանալու նպատակով այն ուղարկվել է շահագրգիռ գերատեսչություններ՝ ՀՀ ֆինանսների և ՀՀ տարածքային կառավարման և արտակարգ իրավիճակների նախարարություններ:	

	հաստատություններին ներկայացվող պահանջները		
8. Միջազգային չափանիշների հետ համադրելի ությունը ապա հովելու նպատակով ուսումնական հաստատություն ների վարկանիշա վորման համակարգի ներդրում	- ներդրված են հանրակրթական դպրոցների ներքին և արտաքին գնահատման մեխանիզմներ - վարկանիշավորման արդյունքում ընտրված են <<Լավագույն դպրոցները>> (ըստ դպրոցների դասակարգման խմբերի)	Ստեղծվել է ՀՀ հանրակրթական դպրոցների վարկանիշավորման համակարգը: Վարկանիշավորման համակարգը ներկայացված է առանձին ինտերնետային կայքում՝ http://schoolrate.armedu.am , որտեղ շահառուները հնարավորություն ունեն կատարել ցուցանիշների ընտրություն և ստանալ դպրոցների վարկանիշավորման սանդղակ՝ իրենց համար նախընտրելի չափանիշներով: Նշված կայքը հասանելի է 2014 թվականի հունվարի 20-ից: Կայքում տեղակայված է դպրոցների ընդհանուր վարկանիշը, գործում են <<Սովորողների ուսումնառություն>>, <<Ուսուցիչներ>>, <<Դպրոցի ակտիվություն>>, <<Ներդպրոցական ակտիվություն>>, <<Կառավարման արդյունավետու թյուն>> բաժինները: Դպրոցները դասակարգված են 7 խմբերում՝ ըստ քաղաքային և գյուղական բնակավայրերի, ըստ մեծության՝ մեծ, միջին և փոքր, ըստ իրականացվող կրթական ծրագրի աստիճանի՝ հիմնական, միջնակարգ, ավագ դպրոցներ և վարժարաններ: 2014 թվականի ընթացքում դպրոցներից ստացված տեղեկատվության հիման վրա, <<Կրթական տեխնոլոգիաների ազգային կենտրոնում>> վերանայվել ու ամփոփվել են հանրակրթական դպրոցների վարկանիշավորման համակարգի ցուցանիշները, դրանց կշիռները և հաշվարկի միավորային համակարգը, հարցաթերթերը ենթարկվել են ճշգրտման և լրամշակման: 2014 թվականին վարկանիշավորվել են ինչպես պետական, այնպես էլ ոչ պետական հանրակրթական ուսումնական հաստատությունները՝ բացառությամբ մասնագիտացված, հատուկ և տարրական դպրոցների: Ներկայումս htpp//schoolrate.armedu.am կայքում առկա են հանրակրթական դպրոցների վարկանիշավորման արդյունքում ընտրված լավագույն եռյակները՝ ըստ դպրոցների դասակարգման 7 խմբերի:	Հանրակրթության վարչություն, Բարձրագույն և հետբուհական մասնագիտական կրթության վարչություն, Զարգացման ծրագրերի և մոնիթորինգի վարչություն

	- ՀՀ բոլոր բուհերը մասնակցել են վարկանիշավորման գործընթացին	Բարձրագույն ուսումնական հաստատությունների փորձնական վարկանիշավորման իրականացման արդյունքների ամփոփումից հետո, վերանայվել ու լրամշակվել է վարկանիշավորման համակարգի մեթոդաբանությունը, ցուցանիշները, հաշվարկի մեխանիզմները: Այս գործընթացին իրենց մասնակցությունն են ունեցել բազմաթիվ միջազգային և տեղական փորձագետներ, որպեսզի համակարգը լինի մաքսիմալ օբյեկտիվ և արտահայտի ուսանողակենտրոն որակյալ կրթական ծառայությունների տրամադրման քաղաքականություն: 2014 թվականի դեկտեմբերի դրությամբ www.ranking.armedu.am կայքում հրապարակվել է պետական և ոչ պետական բուհերի վարկանիշավորման նոր ցանկը, համաձայն որի՝ առաջատար եռյակում են հայտնվել Երևանի պետական համալսարանը, Հայաստանի ամերիկյան համալսարանը և Երևանի Մ.Հերացու անվան պետական բժշկական համալսարանը:	
9. Կրթության կառավարման տեղեկատվական համակարգի կատարելա գործում	- գործարկված է բարձրագույն մասնագիտական կրթության կառավարման տեղեկատվական համակարգը	2013 թվականից <<Մասնագիտական կրթության կառավարման տեղեկատվական համակարգը>> տեղադրված է Կրթական տեխնոլոգիաների ազգային կենտրոնի տեղեկատվական կենտրոնական հանգույցում (սերվերում): 2014 թվականին ԿՏԱԿ-ն իրականացնելով սերվերի լիարժեք տեխնիկական սպասարկում, ապահովել է համակարգի բնականոն շահագործումը: ՀՀ բարձրագույն ուսումնական հաստատություններում ավարտվել է մասնագիտական կրթության կառավարման տեղեկատվական համակարգի (ՄԿԿՏՀ) փաստացի տեղադրման աշխատանքները: Բարձրագույն ուսումնական հաստատությունների կողմից ընթանում է տվյալների ամբողջական մուտքագրման աշխատանքները՝ մասնագիտական կրթության կառավարման տեղեկատվական համակարգում նշանակված պատասխանատու անձանց միջոցով:	Բարձրագույն և հետբուհական մասնագիտական կրթության վարչություն, Նախնական և միջին մասնագիտական կրթության վարչություն, Կրթական տեխնոլոգիաների ազգային կենտրոն

	- գործարկված է նախնական (արհեստագործական) և միջին մասնագիտական կրթության կառավարման տեղեկատվական համակարգը	Կազմակերպվել են վերապատրաստման դասընթացներ նախնական (արհեստագործական) և միջին մասնագիտական, բարձրագույն մասնագիտական ուսումնական հաստատությունների ներկայացուցիչների համար՝ ներդրված ծրագիրը տեխնիկական և արդյունավետ օգտագործելու նպատակով: ՄԿԿՏՀ-ի տեխնիկական աջակցության գործընթացի բարելավման նպատակով ՀՀ ԿԳ նախարարության համապատասխան վարչություններում տեղադրվել է ՄԿԿՏՀ-ն՝ հնարավոր փոփոխությունների ու լրամշակումների վերաբերյալ դիտարկումները հետագայում <<Սիներջի Ինթերնեյշնլ>> կազմակերպությանը փոխանցելու համար: Ուսումնական հաստատություններում <<Սիներջի Ինթերնեյշնլ>> կազմակերպության ներկայացուցիչների աջակցությամբ իրականացվում է ՄԿԿՏ համակարգում տվյալների մուտքագրման գործընթացը: Պարբերաբար կազմակերպվել են քննարկումներ մասնագիտական կրթության կառավարման տեղեկատվական համակարգի տեխնիկական սպասարկման ընթացքում առաջացող խնդիրների կարգավորման նպատակով: Հաշվետու ժամանակաշրջանում <<Սիներջի Ինթերնեյշնլ>> կազմակերպության կողմից ընթացքում է եղել համակարգի երաշխիքային սպասարկումը, որի ավարտը 2015 թվականի հունվարն է: ՀՀ ԿԳ նախարարությունը նախաձեռնել է ՄԿԿՏՀ-ում տվյալների մուտքագրման և հաշվետվությունների ստացման կարգի նախագծի մշակումն ու հաստատումը, որի արդյունքում կկարգավորի ՄԿԿՏ համակարգի գործունեությունը: Մշակվել է <<Մասնագիտական կրթություն և ուսուցում>> պորտալը (www.vetarmenia.am)՝ որպես կրթական ցանցերը սպասարկող էլեկտրոնային գործիք, որը կգործարկվի 2015 թվականին:	
10. Դպրոցների գործունեության	- ՀՀ հանրակրթական բոլոր դպրոցներում	Համակարգը ներդրված է հանրապետության բոլոր դպրոցներում: Հանրապետության 1388 պետական	Կրթական տեխնոլոգիաների

թափանցիկության և կառավարման արդյունավետության բարձրացում տեղեկատվական տեխնոլոգիաների կիրառման միջոցով	գործում է <<Դպրոցների կառավարման տեղեկատվական համակարգը>>, որը հնարավարություն է ընձեռում յուրաքանչյուր աշակերտի մասին հավաքագրված անձնավորված տեղեկատվությունը կուտակել մեկ միասնական տեղեկատվական շտեմարանում, բացառել ով նույն աշակերտի բազմակի հաշվառումը, նվազեցնելով տեղեկատվության անճշտությունների և միտումնավոր սխալների քանակը, ինչպես նաև վերահսկել աշակերտի դպրոցից դպրոց տեղափոխության գործընթացը - գործում է <<Ավարտական փաստաթղթերի հաշվառման համակարգը>>, որը հնարավորություն է ընձեռում կուտակել տեղեկատվությունը մեկ միասնական տեղեկատվական	հանրակրթական ուսումնական հաստատությունների ներկայացուցիչների համար ՀՀ բոլոր մարզերում իրականացվել են վերապատրաստումներ <<Դպրոցների կառավարման տեղեկատվական(ԴԿՏ) համակարգի>> շահագործման կիրառման ուղղությամբ: Երկօրյա վերապատրաստումներն իրականացվել են ըստ մարզերի՝ 20-22 հոգանոց խմբերով: 2014 թվականի ընթացքում ԿՏԱԿ-ը բոլոր դպրոցներին տրամադրել է ամենօրյա խորհրդատվություն և համակարգի շահագործման ուղեկցում: Փետրվարից սկսվել և շարունակվում են համակարգում տվյալների մուտքագրման աշխատանքները: 2014 թվականի ընթացքում ԴԿՏ համակարգ է մուտքագրվել շուրջ 250 հազար աշակերտների և 28 հազար աշխատակիցների (մանկավարժական, վարչական և այլն) անձնական տվյալներ: Գործում է <<Ավարտական փաստաթղթերի հաշվառման համակարգը>>՝ վերջին 7 ուսումնական տարիների համար: 2014 թվականի ընթացքում շարունակվել են <<Ավարտական փաստաթղթերի հաշվառման համակարգի>> միասնական տեղեկատվական շտեմարանում տվյալների ամբողջացման աշխատանքները: 2014 թվականի ընթացքում շտեմարանում մուտքագրվել է ընդհանուր թվով շուրջ 15000 տվյալ:	ազգային կենտրոն

	շտեմարանում, տեղեկատվությունը հասանելի դարձնել ոլորտի մասնակիցներին, նվազեցնել անճշտությունների քանակը, ապահովել տվյալների/տեղեկատվության ամբողջականությունը և հուսալիությունը		
11. Հանրակրթական ուսումնական հաստատությունների ֆինանսավորման արդյունավետության բարձրացում	- փորձարկված են կրթության կազմակերպման տարբերակված մեխանիզմներ հանրակրթության ոլորտում՝ ըստ տարածքային առանձնահատկությունների, ապահովված է պետական միասնական քաղաքանության իրականացումը	Գյուղական թերհամալրված հանրակրթական ուսումնական հաստատություններում կրթության կազմակերպման արդյունավետ մեխանիզմների ներդրման նպատակով համապատասխան առաջարկություններ է ներկայացվել ՀՀ կառավարություն:	Հանրակրթության վարչություն, Ֆինանսատնտեսագիտական և հաշվապահական հաշվառման վարչություն
12. ՀՀ մարզերի և Երևան քաղաքի ուսումնական հաստատությունների գործունեության նկատմամբ վերահսկողության արդյունավետության և թափանցիկության բարձրացում	- տեսչավորման ընթացքում ներդրված են սուբյեկտիվիզմի գործոնը նվազեցնող նոր ստուգաթերթեր, ձևաթղթեր	ՀՀ կառավարության 2013 թվականի հունիսի 6-ի N598-Ն որոշմամբ հաստատվել են ՀՀ ԿԳ նախարարության աշխատակազմի կրթության պետական տեսչության (ԿՊՏ)՝ ռիսկի վրա հիմնված ստուգումների մեթոդաբանությունը և ռիսկայնությունը որոշող չափանիշների ընդհանուր նկարագիրը և ստուգումների ստուգաթերթերը (նախադպրոցական կրթություն, հանրակրթություն, նախնական մասնագիտական (արհեստագործական) կրթություն): Կրթության պետական տեսչության կողմից անցկացվող ստուգումներն ու ուսումնասիրություններն իրականացվում են վերը նշված՝ ՀՀ կառավարության	Բարձրագույն և հետբուհական մասնագիտական կրթության վարչություն, Նախնական և միջին մասնագիտական կրթության վարչություն, Հանրակրթության վարչություն, Կրթության պետական տեսչություն

		2013թ. հունիսի 6-ի N598-ն որոշմամբ և ՀՀ ԿԳ նախարարի 19.08.2011թ. թիվ 968-Ա/Ք հրամանով հաստատված ստուգաթերթերի ու ձևաթղթերի հիման վրա: 2015 թվականին նախատեսվում է կիրառվող ձևաթղթերի/ստուգաթերթերի լրամշակում, ելնելով 2013-2014 թվականների ընթացքում տեսչության կողմից իրականացված ստուգումների արդյունքում ստուգաթերթերում առկա բացթողումների շտկման, գնահատման կշիռների ճշգրտման, ինչպես նաև ՀՀ կրթության բնագավառը կարգավորող իրավական ակտերում կատարված լրացումների և փոփոխությունների ներառման անհրաժեշտությունից:	
	- հրապարակված են ուսումնական հաստատություններում անցկացված տեսչավորման արդյունքները	ՀՀ ԿԳ նախարարության պաշտոնական կայքում (www.edu.am) և Կրթության պետական տեսչության կայքում (www.kpt.am), ինչպես նաև <<Կրթություն>> շաբաթաթերթում հրապարակվել են ՀՀ մարզպետարանների կրթության հարցերով զբաղվող ստորաբաժանումներում, ուսումնական հաստատություն ներում իրականացված տեսչավորումների, ուսումնասիրու թյունների արդյունքները, դրանց հիման վրա մշակված 2013 թվականի տարեկան և 2014 թվականի առաջին կիսամյակի ամփոփ հաշվետվությունները, ընդհանուր և թեմատիկ վերլուծությունները:	
	- վարչական/կարգապահա կան տույժերի կիրառում՝ ըստ կրթական մակարդակների	Տեսչավորումների, ուսումնասիրությունների արդյունքում տեսչության կողմից ներկայացված առաջարկությունների հիման վրա համապատասխան լիազորված մարմինների կողմից կարգապահական տույժեր են կիրառվել ՀՀ ուսումնական հաստատությունների տնօրենների նկատմամբ: 2013 թվականին համապատասխան տույժեր են կիրառվել 43 անձանց նկատմամբ (25 հոգու տրվել է նախազգուշացում, 12 հոգու՝ նկատողություն, 1 հոգու՝ խստ նկատողություն, 5 հոգի ազատվել է զբաղեցրած պաշտոնից): 2014 թվականին համապատասխան տույժեր	

		են կիրառվել 10 անձանց նկատմամբ (4 հոգու՝ նկատողություն, 6 հոգի ազատվել է զբաղեցրած պաշտոնից): Ինչպես նաև առաջարկվել է 14 ավագ դպրոցների տնօրենների ներկայացնել համապատասխան կարգապահական տույժերի:	
13. Բարձրագույն ուսումնական հաստատությունների հակակոռուպցիոն ռազմավարական ծրագրի մշակում	- ԲՈՒՀ-երի կառավարման խորհուրդների կողմից հաստատված է հակակոռուպցիոն միջոցառումների տարեկան ծրագիրը - ԲՈՒՀ-երի կառավարման խորհուրդների կողմից ընդունված և հրապարակված են կատարված աշխատանքների վերաբերյալ տարեկան հաշվետվությունները	ՀՀ բուհերի կողմից մշակվել և ՀՀ ԿԳ նախարարություն են ներկայացվել կոռուպցիոն երևույթների դեմ պայքարի համալիր միջոցառումների ծրագրեր: Առանձին բուհերի կողմից ՀՀ ԿԳ նախարարություն են ներկայացվել իրենց կողմից իրականացված հակակոռուպցիոն ծրագրերի իրականացման արդյունքների մասին տեղեկանքներ:	Բարձրագույն և հետբուհական մասնագիտական կրթության վարչություն, պետական ԲՈՒՀ-եր
14. Ապահովել ուսումնական հաստատություններում գնումների թափանցիկությունը և հրապարակայնությունը	- ապահովված է գնումների գործընթացի հարապարակայնությունը - հրապարակված են գնումների արդյունքները	Ապահովված է ուսումնական հաստատություններում գնումների թափանցիկությունը և հրապարակայնությունը: Ուսումնական հաստատությունների կողմից մրցութային կարգով իրականացվող գնումների մասին հայտարարությունները /բաց ընթացակարգ, պարզեցված ընթացակարգ, շրջանակային համաձայնագիր/ ՀՀ ԿԳ նախարարությունը սահմանված կարգով տեղադրում է www.gnumner.am կայքում: Յուրաքանչյուր գնման գործընթացի արդյունքում ուսումնական հաստատությունների կողմից իրականացված գնումների արդյունքները /տեղեկատվություն կնքված պայմանագրերի կամ մրցույթները չկայացած լինելու մասին/ ՀՀ ԿԳ նախարարության կողմից տեղադրվում են www.gnumner.am կայքում:	Կրթական ծրագրերի կենտրոն (ԾԻԳ)

15. Մանկավարժական կադրերի ընտրության, նշանակման և խրախուսման գործընթացների կատարելագործում	- հանրակրթական ուսումնական հաստատությունում ուսուցչի թափուր տեղը համալրվում է վերանայված կարգի պահանջների համաձայն - <<Տարվա լավագույն ուսուցիչ>>, <<Տարվա լավագույն տնօրեն>>, <<Տարվա լավագույն դաստիարակ>> մրցույթները իրականացվում են վերանայված ընթացակարգերի համաձայն	Հանրակրթական ուսումնական հաստատությունում ուսուցչի թափուր տեղը համալրվում է վերանայված՝ <<Հանրակրթական ուսումնական հաստատության ուսուցչի թափուր տեղի համար մրցույթի օրինակելի կարգի>> պահանջների համաձայն: Իսկ հանրակրթական դպրոցի ուսուցչի թափուր տեղի համար մրցույթի հայտարարությունները հրապարակվում են <<Կրթություն>> շաբաթաթերթում և www.armedu.am կայքի <<Հայտարարություններ>> բաժնում:: <<Տարվա լավագույն ուսուցիչ>>, <<Տարվա լավագույն տնօրեն>>, <<Տարվա լավագույն դաստիարակ>> մրցույթները իրականացվում են վերանայված ընթացակարգերի համաձայն: 2014 թվականին <<Տարվա լավագույն ուսուցիչ>>, <<Տարվա լավագույն տնօրեն>> և <<Տարվա լավագույն դաստիարակ>> ամենամյա մրցույթի հանրապետական փուլին մասնակցել են 35 մանկավարժներ՝ ՀՀ բոլոր մարզերից և Երևանից: Մրցույթի ամփոփումից հետո, հանձնաժողովները որոշել են <<Տարվա լավագույն ուսուցչին>>, <<Տարվա լավագույն տնօրենին>> և <<Տարվա լավագույն դաստիարակին>>: Տարվա լավագույն ուսուցչին և դաստիարակին ՀՀ վարչապետը պարգևատրել է ավտոմեքենաներով: Մրցույթին մասնակից մյուս ուսուցիչները խրախուսվել են ՀՀ ԿԳ նախարարի <<Ոսկե հուշամեդալով>>, պատվոգրերով և շնորհակալագրերով:	Հանրակրթության վարչություն, Անձնակազմի կառավարման վարչություն
16. Կրթության կառավարման որակի և արդյունավետության բարձրացում	- հաստատված են նախնական և միջին մասնագիտական ուսումնական հաստատությունների տնօրենների պարտադիր վերապատրաստման և հավաստագրման կարգերը	ՀՀ Նախագահի կողմից ս/թ հունիսի 5-ին վավերացվել է <<Նախնական մասնագիտական (արհեստագործական) և միջին մասնագիտական կրթության մասին>> ՀՀ օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին>> ՀՀ օրենքը (թիվ ՀՕ-18-Ն): Համաձայն նոր օրենքի, արհեստագործական և միջին մասնագիտական ուսումնական հաստատության տնօրեն կարող է ընտրվել կամ նշանակվել այն անձը, որն ունի արհեստագործական և միջին մասնագիտական	Նախնական և միջին մասնագիտական կրթության վարչություն, Անձնակազմի կառավարման վարչություն

		ուսումնական հաստատության ղեկավարման իրավունք (հավաստագիր) և սահմանած կարգով անցել է համապատասխան վերապատրաստում: Միաժամանակ օրենքով նախատեսվում է, որ արհեստագործական և միջին մասնագիտական պետական ուսումնական հաստատության տնօրենն ընտրվում է ՀՀ կառավարության հաստատած մրցութային կարգով: ՀՀ ԿԳ նախարարի 2014 թվականի հոկտեմբերի 6-ի թիվ 973-Ն և թիվ 974-Ն հրամաններով համապատասխանաբար հաստատվել են՝ <<Նախնական մասնագիտական (արհեստագործական) և միջին մասնագիտական ուսումնական հաստատության ղեկավարման իրավունք (հավաստագիր) ստանալու նպատակով վերապատրաստող կազմակերպության ընտրության և դիմած անձին վերապատրաստման>> և <<Նախնական մասնագիտական (արհեստագործական) և միջին մասնագիտական ուսումնական հաստատության ղեկավարման իրավունքի հավաստագրման քննության կազմակերպման և հավաստագրման, հավաստագրման հանձնաժողովի կազմավորման և գործունեության>> կարգերը:	
17. Գիտական կադրերի պատրաստման համակարգի կատարելա գործում	- ներդրված է գիտական աստիճանաշնորհման նոր կանոնակարգ - ներդրված է գիտամանկավարժական կադրերին պրոֆեսորի և դոցենտի գիտական կոչումներ շնորհելու նոր կարգ - գիտական աստիճանի և կոչման հավակնելու	ՀՀ գիտական կոչումների և աստիճանների շնորհման դաշտը նորովի կանոնակարգելու նպատակով ՀՀ ԿԳ նախարարի հրամանով ստեղծվել է աշխատանքային խումբ՝ ՀՀ ԿԳՆ, ՀՀ ԲՈՀ-ի, ՀՀ ԳԱԱ-ի, ՀՀ ԿԳՆ ԳՊԿ-ի, ՀՀ բուհերի ու քաղաքացիական հասարակության ներկայացուցիչների մասնակցությամբ: Աշխատանքային խումբն ուսումնա սիրելով ոլորտը՝ մշակել է գործող ՀՀ օրենքներում և ՀՀ կառավարության որոշումներում առաջարկվող փոփոխությունների ու լրացումների փաթեթը, որն էլ ներկայացվել է ՀՀ ԿԳ նախարարին: Մշակվել և ՀՀ կառավարություն է ներկայացվել <<ՀՀ գիտական աստիճանաշնորհման կանոնակարգում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին>> ՀՀ կառավարության որոշման նախագիծը: Մշակվել և հաստատվել է ՀՀ գիտական մասնագիտությունների նոր	Գիտության պետական կոմիտե, Բարձրագույն որակավորման հանձնաժողով

	համար սահմանված են նոր չափանիշներ	անվանացանկը, որոնց գծով շնորհվում են գիտական աստիճաններ և գիտական կոչումներ: <<Գիտական և գիտատեխնիկական գործունեության մասին>> ՀՀ օրենքի 16-րդ հոդվածի փոփոխությունները առաջին ընթերցմամբ ընդունվել է Ազգային ժողովի կողմից:	
18. Կրթության և գիտության ոլորտի թափանցիկության, հաշվետվողականության և հանրային իրազեկման բարձրացում	- լուսաբանված է կրթության ոլորտում իրականացվող հակակոռուպցիոն ծրագրով նախատեսված միջոցառումների իրականացման ընթացքը - գործարկված է ՀՀ ԿԳ նախարարության նոր պաշտոնական կայքը, որն ունի նաև հակակոռուպցիոն ծրագրերի տեղեկատվական էջ - լուսաբանվել են կրթության ոլորտում ներգրավված շահառուների շրջանում իրականացված ուսումնասիրությունների արդյունքները	Հանրապետական ԶԼՄ-ներում լուսաբանվել է <<Կրթության և գիտության համակարգում կոռուպցիոն երևույթների դեմ պայքարի 2013–2014թթ. միջոցառումների համալիր ծրագիրը>> /38 լրատվական հեռուստառեպորտաժ, 20 հարցազրույց, տեղեկատվական բնույթի 57 հրապարակում/: Ծրագիրը տեղադրվել է ՀՀ ԿԳ նախարարության պաշտոնական կայքի՝ <<Հակակոռուպցիոն ծրագիր>> բաժնում: Թեստավորման ավարտական փուլում է ՀՀ ԿԳ նախարարության պաշտոնական կայքի նոր տարբերակի գործարկման աշխատանքները: Ներկայումս ՀՀ ԿԳ նախարարության աշխատակազմի կառուցվածքային և առանձնացված ստորաբա ժանումներից հավաքագրվում է անհրաժեշտ տեղեկատվությունը՝ նոր կայքում զետեղելու նպատակով: Հրապարակվել է <<Հայաստանի պետական բուհերի ուսանողության մասնակցությունը Բոլոնիայի գործընթացին>> և <<Հ պետական բուհերի առկա ուսուցման համակարգում սովորող ուսանողների սոցիալական աջակցության կարիքի ուսումնասիրության>> արդյունքները, որը լուսաբանվել է հանրապետական երեք տասնյակ լրատվամիջոցներով:	Հասարակայնության հետ կապերի և տեղեկատվության վարչություն
19. Գիտելիքի արժևորմանը միտված հասարակական կարծիքի ձևավորում	- սահմանված են հանրակրթության ոլորտում անցկացվող կրթական բնույթի առարկայական մրցույթների,	Հաստատվել է <<Հանրակրթության ոլորտում իրականացվող կրթական բնույթի առարկայական մրցույթների, մրցաշարերի, օլիմպիադաների չափորոշիչները սահմանելու մասին>> կարգը, համաձայն որի սահմանված են հանրակրթության ոլորտում անցկացվող կրթական բնույթի առարկայական	Հասարակայնության հետ կապերի և տեղեկատվության վարչություն, Հանրակրթության վարչություն,

	մրցաշարերի, օլիմպիադաների անցկացման ու գնահատման չափորոշիչները - հրապարակային խրախուսման են արժանացել ինտելեկտուալ խաղերի և մրցույթների, առարկայական օլիմպիադաների հաղթողները, լավագույն ուսանողներն ու աշակերտները	մրցույթների, մրցաշարերի, օլիմպիադաների անցկացման ու գնահատման չափորոշիչները: 2014 թվականին առարկայական օլիմպիադաները անցկացվել են նոր չափորոշիչների համաձայն: ՀՀ-ում դպրոցականների առարկայական օլիմպիադաներն անցկացվում են հանրակրթական 16 առարկաներից (<<Մաթեմատիկա>>, <<Ֆիզիկա>>, <<Քիմիա>>,<<Կենսաբանություն>>,<<Ինֆորմատիկա>>, <<Աստղագիտություն>>, <<Հայոց լեզու, հայ գրականություն>>, <<Ռուսաց լեզու>>, <<Անգլերեն>>, <<Ֆրանսերեն>>, <<Գերմաներեն>>, <<Պատմություն>>, <<Աշխարհագրություն>>, <<Հայոց եկեղեցու պատմություն>>, ՆԶՊ): Հանրապետական ԶԼՄ-ներում լուսաբանվել է 2013-2014 ուսումնական տարվա դպրոցականների հանրապետական առարկայական օլիմպիադաների ընթացքը և արդյունքները, հաղթողները պարգևատրվել են ՀՀ ԿԳ նախարարի կողմից: 2014 թվականին հայ դպրոցականները մասնակցել են առարկայական միջազգային 6 օլիմպիադաների, որտեղից վերադարձել են 20 մեդալներով՝ 1 ոսկե, 9 արծաթե և 10 բրոնզե: 2013-2014 ուսումնական տարում ՀՀ թիմը <<Աշխարհագրություն>> առարկայի միջազգային օլիմպիադային մասնակցել է դիտորդի կարգավիճակով: 2014-2015 ուսումնական տարում, 6 առարկայական օլիմպիադաներին զուգահեռ, նախատեսվում է Հայաստանի թիմի մասնակցությունը <<Աշխարհագրություն>> առարկայի միջազգային օլիմպիադային: Միջազգային օլիմպիադաների հաղթողները պարգևատրվել են ՀՀ նախագահի, ՀՀ վարչապետի և ՀՀ ԿԳ նախարարի կողմից, որը լուսաբանվել է հանրապետական ԶԼՄ-ներով: Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի և ՀՀ ԿԳ նախարարության հետ համատեղ հանրակրթական դպրոցներում կազմակերպվել և անցկացվել է <<Ավետարանական	Նախնական և միջին մասնագիտական կրթության վարչություն, Բարձրագույն և հետբուհական մասնագիտական կրթության վարչություն

		առակները հայ դպրոցում>> հանրապետական մրցույթը: Մրցույթի հանրապետական փուլին մասնակցել են 12 դպրոցներ, որոնցից 1-ն արժանացել է Հայրապետական մրցանակի: Բոլոր 12 դպրոցները պարգևատրվել են Ամենայն Հայոց Կաթողիկոսի կողմից: ՀՀ ԱԺ համատեղ իրականացվել է <<Փարաջանովի հետադարձ լույսը>> ծրագիրը: Տարվա ընթացքում անցկացվել են շարադրությունների մրցույթներ՝ նվիրված հայկական բանակին՝ <<Հայոց բանակը>> վերնագրով, <<Իմ ընտանիքի պատմությունը>>, <<Իմ ոստիկանը>> թեմաներով, որոնց մասնակիցները պարգևատրվել են ՀՀ ԿԳ, ՀՀ պաշտպանության նախարարների և ՀՀ ոստիկանապետի կողմից: Կազմակերպվել է նաև <<Ռուսաստանի հայերի միություն>> ՀԿ-ի հետ համատեղ <<Երգը բարեկամության կամուրջ է>> ռուսական երգի հանրապետական փառատոն: ՀՀ ԿԳ նախարարության, <<Արմենիա>> հեռուստաընկերության և <<Տաշիր>> բարեգործական հիմնադրամի միջև կնքվել է եռակողմ համագործակցության հուշագիր՝ <<Արմենիա>> հեռուստաընկերությամբ <<Ամենախելացին>> ինտելեկտուալ խաղը եթեր հեռարձակելու վերաբերյալ: ՀՀ պաշտպանության, ՀՀ ԿԳ նախարարությունների և <<Երկրապահ կամավորականների միություն>> ՀԿ-ի միջև կնքվել էր փոխըմբռնման հուշագիր՝ ՀՀ հանրակրթական ուսումնական հաստատություններում <<Պատանի երկրապահ>> հայրենասիրական ակումբներ ստեղծելու և նրանց արդյունավետ գործունեությանն օժանդակելու վերաբերյալ: ՀՀ ԿԳ նախարարության և <<Այբ>> կրթական հիմնադրամի միջև ստորագրվել է Համագործակցության հուշագիր՝ Հայաստանում <<Այբ>> հիմնադրամի կողմից կազմակերպվող <<Կենգուրու>>, <<Ռուսական արջուկ>>, <<Մեղու>> մրցույթների և <<Պատանի	

		քիմիկոսների համահայկական մրցաշարի>> կազմակերպման վերաբերյալ: Անցկացվել է Համահայկական բնագիտական 2-րդ օլիմպիադան, որին մասնակցել են Սփյուռքի 7 երկրների, Հայաստանի և ԼՂՀ-ի 14-18 տարեկան 72 դպրոցականներ: Համահայկական 2-րդ օլիմպիադան անցկացվում է մաթեմատիկա, ֆիզիկա և Հայաստանի աշխարհագրություն առարկաներից: Բնագիտական օլիմպիադայի հիմնական հաղթողների համար նախատեսվել են 1-3-րդ կարգի դիպլոմներ և մրցանակներ: Բացի հիմնական մրցույթներից՝ օլիմպիադայի ծրագրում անցկացվել են բազմաթիվ խաղեր, պարի ուսուցում, ուսուցողական միջոցառումներ, քայլարշավ և այցելություն Բյուրականի աստղադիտարան: Գերմանիայի միջազգային համագործակցության ընկերության (GIZ) աջակցությամբ Հայաստանը 2012 թվականից անդամակցել է <<Համաշխարհային հմտություններ>> միջազգային կազմակերպությանը: 2014թ. նոյեմբերի 26-27-ը կայացել է <<Հայաստանի հմտություններ>> մրցույթի ազգային փուլը 3 մասնագիտություններով՝ վեբդիզայն, մեխատրոնիկա, տեղեկատվական տեխնոլոգիաներ: Մրցույթի բոլոր մասնակիցները ստացել են պատվոգրեր և մրցանակներ ՀՀ ԿԳ նախարարի կողմից: Գերմանիայի միջազգային համագործակցությունն (GIZ) իր աջակցությունն է ցուցաբերելու <<Համաշխարհային հմտություններ Հայաստան>> նախագծի շրջանակում հայկական թիմի անդամներին վերապատրաստելու և 2015 թվականին Սան Պաուլոյում կայանալիք <<Համաշխարհային հմտություններ>> միջազգային մրցույթին մասնակցելունգործում:	
20. Կրթության ոլորտի մասնակցային մոնիթորինգ	- կրթության ոլորտում գործում է քաղաքացիական հակակոռուպցիոն ցանց	Մշակված կարգերի նախագծերը դրվում են www.edu.am և www.ktak.am կայքերում՝ հանրային քննարկման, ինչպես նաև ուղարկվում են Երևանի քաղաքապետարան և ՀՀ մարզպետարաններ՝ տեղերում քննարկելու և	Բարձրագույն և հետբուհական մասնագիտական կրթության վարչություն,

		առաջարկություններ ներկայացնելու համար: 2014 թվականի առաջին կիսամյակում Հանրային քննարկման է դրվել 3 իրավական ակտի նախագիծ: ՀՀ ԿԳ նախարարության պաշտոնական կայքում տեղադրվում են նաև մրցույթների անցկացման կարգերը, հարցաշարերն ու մրցույթների արդյունքները: ՀՀ ԿԳ նախարարը Մարտի 8-ին ընդառաջ շրջաբերական նամակով դիմել է ՀՀ մարզպետներին և Երևանի քաղաքապետին, առաջարկելով քայլեր ձեռնարկել ապօրինի դրամահավաքը կանխելու ուղղությամբ: ՀՀ ԿԳ նախարարին հաշվետվություն է ներկայացրել <<Դասագրքերի շրջանառու հիմնադրամը>>, որը լուսաբանվել է հանրապետական մամուլում: Լուսաբանվել է ԲՈՀ-ի գիտական աստիճանաշնորհման համակարգի փոփոխությունները: ՀՀ ԿԳ նախարարը հանդիպում է ունեցել երիտասարդ գիտնականների հետ, քննարկվել են գիտական ծրագրերի համար նախատեսված դրմաշնորհների հատկացմանը առնչվող հարցեր, հանդիպումը լուսաբանվել է: ՀՀ կառավարության կողմից սահմանած կարգի համաձայն, հատուցվել են <<Փարոս>> համակարգում 2013 թվականին ներգրավված ընտանիքների 850 ուսանողների, իսկ 2014 թվականին՝ 1070 ուսանողների ուսման վարձավճարները: Գործընթացը լուսաբանվել է ԶԼՄ-ներով: 2014թ. հունիս-հուլիս ամիսներին ՀՀ ԿԳ նախարարն այցելել է քննական կենտրոններ, որը լուսաբանվել է: ՀՀ ԿԳ նախարարության <<Թեժ գիծ>> հեռախոսով ստացվել է 108 հախոսազանգ՝ դպրոցներում դրամահավաքի և այլ խնդիրների վերաբերյալ (որից 73-ը՝ Երևանից, 35-ը՝ մարզերից): Բոլոր ահազանգերը համապատասխան ընթացք են ստացել ինչպես նախարարության հանրակրթության վարչության, այնպես էլ կրթության պետական տեսչության կողմից:	Նախնական և միջին մասնագիտական կրթության վարչություն, Հանրակրթության վարչություն, Զարգացման ծրագրերի և մոնիթորինգի վարչություն, Կրթության պետական տեսչություն, քաղաքացիական հասարակության ինստիտուտներ (համաձայնությամբ)

		Պատասխան է տրվել քաղաքացիների կողմից էլեկտրոնային փոստով ստացված ավելի քան 500 նամակի, ՀՀ ԿԳ նախարարի մոտ կազմակերպվել է քաղաքացիների 9 ընդունելություն, որոնց ընթացքում նախարարն ընդունել է 129 քաղաքացու: ՀՀ ԿԳ նախարարության ինֆոկենտրոնը սպասարկել է նախարարություն այցելած 6100 քաղաքացու: ՀՀ ԿԳ նախարարության պաշտոնական www.edu.am կայքէջը գերատեսչական կայքերի մեջ հաճախելիության աստիճանով գտնվել է առաջատար դիրքերում: Գործում է Facebook սոցիալական ցանցի «ԿԳՆ ընդունարան» էջը, որտեղ առցանց պատասխան է տրվել օգտատերերի բարձրացրած բոլոր 8 հարցերին: Շարունակում է գործել պաշտոնական կայքի բլոգը՝ http://armeniaedu.blogspot.com/: Լուսաբանվել են ՀՀ ԿԳ նախարարի այցերը ՀՀ Կոտայքի, Շիրակի, Տավուշի և Վայոց Ձորի մարզեր /հեռուստատեսություն, կայքեր, ռադիո/: Կազմակերպվել է ՀՀ ԿԳ նախարարի և նախարարի տեղակալների, վարչության պետերի 14 մամուլի ասուլիս, որոնք լուսաբանվել են հանրապետական հեռուստաընկերությունների ու ռադիոընկերությունների կողմից, ինչպես նաև անդրադարձ է կատարվել հանրապետական մամուլում:	
	- ներկայացված են քաղաքացիական հասարակության ինստիտուտների կողմից հաշվետվություններ, վերլուծություններ, առաջարկություններ	ՀՀ ԿԳ նախարարության պատվերով <<Այ Փի Էս Սի>> Քաղաքական և սոցիոլոգիական խորհրդատվությունների ինստիտուտը 2013թ. հոկտեմբեր-դեկտեմբեր ամիսներին իրականացրել է <<Հայաստանի պետական բուհերի ուսանողության Բոլոնիայի գործընթացին մասնակցության ուսումնասիրություն>>: Նշված հետազոտությունը ամփոփվել և ներկայացվել է ՀՀ ԿԳ նախարարություն 2014 թվականի սկզբին: Հետազոտության արդյունքներն օգտագործվելու են ՀՀ ԿԳ նախարարության կողմից՝ բարձրագույն կրթության ոլորտում քաղաքականության հետագա մշակման ու պլանավորման նպատակով:	

	- քաղաքացիական հասարակության ինստիտուտների կողմից ներկայացված առաջարկությունները ներառված են տեսչական ուսումնասիրությունների ձևաթղթերում	Հետազոտության հիմնական նպատակն է՝ գնահատել Հայաստանի պետական բուհերի ուսանողների ընդգրկվածությունը Բոլոնիայի գործընթացում և վերջինիս բաղադրիչների ընկալումներն ուսանողության կողմից: Հետազոտությանը մասնակցել են ՀՀ պետական համալսարանների բակալավրիատում և մագիստրատուրայում առկա ուսուցմամբ սովորող քաղաքացի հանդիսացող ուսանողները: Ընտրանքի ծավալը՝ 1202 ուսանող: Քաղաքացիական հասարակության ինստիտուտների կողմից ներկայացված առաջարկությունները ներառվել են ՀՀ կառավարության 2013 թվականի հունիսի 6-ի՝ <<Հայաստանի Հանրապետության կրթության և գիտության նախարարության աշխատակազմի կրթության պետական տեսչության՝ ռիսկի վրա հիմնված ստուգումների մեթոդաբանությունը և ռիսկայնությունը որոշող չափանիշների ընդհանուր նկարագիրը և ստուգումների ստուգաթերթերը հաստատելու մասին>> N598-Ն որոշման մեջ:	
21. Կոռուպցիայի դեմ պայքարի ոլորտում քաղաքացիական գիտակցության բարձրացում և կրթության կառավարման ոլորտում ներգրավվածների կարողությունների զարգացում	- կրթության տարբեր մակարդակներում իրականացված են հատուկ միջոցառումներ/դասընթացներ հակակոռուպցիոն թեմաներով	Հանրակրթության ոլորտում հակակոռուպցիոն թեմաները ուսուցանվում են հիմնական դպրոցի <<Հասարակագիտություն>> առարկայի շրջանակներում: Միաժամանակ ներդրված է <<Կրթությունն ընդդեմ կոռուպցիայի>> մեթոդական ուղեցույց-ձեռնարկը հանրակրթական դպրոցների ուսուցիչների համար: Նախնական (արհեստագործական) և միջին մասնագիտական ուսումնական հաստատություններում <<Կոռուպցիան և նրա կանխարգելումը>> ծրագիրը ուսուցանվում է ուսումնական պլանների պահուստային ժամերի հաշվին, ինչպես նաև որոշ դրույթներ ընդգրկվել են <<Իրավունքի հիմունքներ>> առարկայի ծրագրում: Բարձրագույն ուսումնական հաստատությունների բակալավրի կրթական ծրագրի մասնագիտությունների՝ <<Տնտեսագիտության հիմունքներ>>, <<Իրավագիտության հիմունքներ>> և <<Քաղաքագիտության	Հասարակայնության հետ կապերի և տեղեկատվության վարչություն, Բարձրագույն և հետբուհական մասնագիտական կրթության վարչություն, Նախնական և միջին մասնագիտական կրթության վարչություն, Հանրակրթության վարչություն, Զարգացման ծրագրերի և մոնիթորինգի վարչություն,

	- տպագրված են ուսումնական/տեղեկատվական բնույթի նյութեր	հիմունքներ>> առարկաների ծրագրերում (որոնցից մեկի ուսուցումը պարտադիր է ուսանողի համար), ներառված են կոռուպցիային և դրա կանխարգելմանը վերաբերող թեմաներ: ՀՀ ԿԳ նախարարության <<Կրթություն>> պաշտոնաթերթում հրապարակվել են մի շարք տեղեկատվական նյութեր գիտելիքի և կրթության արժևորման, կառավարման թափանցիկության վերաբերյալ: <<Голос Армении>> թերթի <<За партой>> խորագրի շրջանակում 2014 թվականին հրապարակվել է 12 նյութ: Մամուլում կրթական թեմաներով հրապարակվել է 706 նյութ: ՀՀ ԿԳ նախարարության պաշտոնական կայքում զետեղվել են նախարարության գործունեությանն առնչվող և հասարակական հետաքրքրություն ներկայացնող 158 հայտարարություն, 300 լրատվական նյութ:	քաղաքացիական հասարակության ինստիտուտներ (համաձայնությամբ)